ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544302

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ իրավաբան
Գ.Հայրապետյանին

պատճենը՝ Կենտրոնի ՀՏ պետ
Կ.Կարապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան Ձեր 07.02.2014թ. N212-ի4 գրության, հիմք ընդունելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, ՀՀ կառավարության 29.07.2010թ. N1007-Ն որոշմամբ հաստատված «Հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրամադրման» կարգի 4-րդ կետը, իրազեկման կարգով տեղեկացվում է, որ գրությամբ բարձրացված հարցերի վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի պարզաբանումը տեղադրված է www.taxservice.am պաշտոնական կայքէջում:

Միաժամանակ՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին համապատասխան հարկային մարմինը պարտադիր կուտակային վճարների վերաբերյալ հաշվարկները ներկայացնելու սահմանված ժամկետից կամ փաստացի ստանալու օրվանից հետո՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում, մշակում է դրանք: Եթե պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակից հանդիսացող վարձու աշխատողների կամ այդ գործատուից պայմանագրային եկամուտ ստացողների կողմից ներկայացված տեղեկություններում չկան սխալներ և կամուրջ հաշվին մուտքագրվել են (վճարվել են) հաշվետվության մեջ նշված կուտակային վճարները, հարկային մարմինը վճարման հանձնարարականներ է ուղարկում գանձապետարան՝ կամուրջ հաշվին մուտքագրված գումարներից և ՀՀ պետական բյուջեից համապատասխան գումարները մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցելու համար:

Վերը նշված հանձնարարականի ուղարկման օրը հարկային մարմինը պարտադիր կուտակային վճարների մասին անհատական տեղեկատվությունը ներկայացնում է մասնակիցների ռեեստրը վարողին:

Վ.Միրումյան

Հարկերի և պարտադիր վճարների մեթոդ. բաժին, հեռ. 060 544646